իսկ միւս գրագիրքն ի յեզերիլն, ի ժողովելն և ի բաժանելն բակլայով՝ յամենայն յոյժ։ Իսկ Թովմաճանն իսկոյն եզերեաց թէ՝ ի ժողովելն և թէ ի գումարելն և իսկոյն ասաց թէ՝ է՛ այսքան այն, և այ՛սքան այս եւն. և առ այս գործ թուագրով առնելոյ Թովմաճանին անդ եղեալ մեծամեծք յոյժ հաւանեցան, զի ոչ գիտէին թուագրով զառնելն։ Ուստի գնացեալ պատմեցին թագուհւոյն. և նա կոչեալ զԹովմաճանն՝ ասէ. Այնց գրագրաց որք բակլայով արարին զհաշիւն ընդ քեզ՝ նոցա եւս պարտիս ուսուցանել զայն թուագրով հաշիւն քո. իսկ վարձքն ես հատուցից քեզ։ Եւ նա յանձն առեալ գնաց։

Եւ գանձապետութեան հաշիւն տեսեաց զաւուրս եօթն և յետ ամենայն հաշուիցն պարտական եղեւ գանձապետ Սելեֆ ուստան թագաւորին 300 վաքիէ ոսկի՝ որ առնէ 7500 դուրուշ։ Վասն որոյ զտունն և զերկիրս նորին առին և դեռ 70 վաքիէ պարտք մնաց թագաւորին, ուստի արկին ի բանտ շղթայիւք գնա։

Եւ յետ այսորիկ հանդէս մեծ արարեալ մուծին զԹովմաճանն ի հանդիսին յորում էր թագուհին իթեկէ և իւր թագաւոր թոռն և այլ ամենայն իշխանք և բաշայք և տարան զԹովմաճանն առաջի թագուհւոյն. թագուհին եւս զբանալի գանձուն և արար զնա Գանձապետ 1764 Օգոստոսի 13ին. և մեծամեծք և պալատականք բազմութեամբ առաջի երթալով թմբկօք և արուեստականօք թափօրս կազմեցին մինչեւ ի գանձատունն և զԹովմաճանն շուրջ պատեալ 30 սպասաւորօք՝ տարան ի գանձատունն և յանձնեցին նմա զամենայն ինչ։

Եւ կանոն է գանձապետաց զի այն 30 սպասաւորսն հանապազ պարտի պահել ընդ իւր որքան է ի նոյն պաշտօնն, զի երբ ելցէ արտաքս գնալ ուրեք ի վիզիթայի կամ ի տեսութիւն ումեք՝ ինքն հեծնու ի ջորին՝ արծաթեայ ձիոյ կազմածովք. և այն 30 սպասաւորքն հրացանաւ վահանաւ և նիզակաւ ընդ գանձապետին պարտին գնալ։ Իսկ երեքն ի սպասաւորաց առաջի ջորւոյ գանձապետին թրով գնան։ Եւ այնուհետեւ ամենայն մեծամեծք զան ի շնորհաւորութիւն Թովմաճանին, նմանապէս և Պատրիարգն բազմութեամբ քահանայից և այլ ամենայն եկեղեցականք զան ի շնորհաւորութիւն։

Արդ յետ երկուց աւուրց առնելոյ ըզգանձապետութեան պաշտօն՝ եկն տօն վերափոխման ամէնօրհնեալ Կուսին Օգոստոսի 15ին։ Եւ թոռն թագուհւոյն՝ թագաւոր մանուկն երեքտասանամեայ որ դեռ տակաւին հանդիսութեամբ ոչ էր ելեալ արտաքս գնալ յեկեղեցին, և այսօր առաջին օր է հանդիսութեամբ ելանելն թագաւորին, և Թովմաճանին եւս ազդ արարին՝ թէ վասն քոյ նոր պաշտօնիդ թագաւորն ելեալ գնալոց է եկեղեցին հանդիսութեամբ. ուրեմն և դու եւս թափորօք զարդարեա զարսդ և հրճուանս մատո՛ թագաւորին և թագուհւոյն։

Եւ Թովմաճանն եւս վասն նոր գանձապետութեանն որ ինքն եւս պարտի ընդ թագաւորին լինել, ուստի ժողովեաց ի յունաց և յայլ ազգաց մահմետականաց զերկայն հանդերձս արեւելեայց և զգեցոյց սպասաւորաց իւրոց, տաւուլ զուռնայով, և փառաւորապէս զարդարեալ ջորւով առաջի թագաւորին ինքն ընդ Պողոս որդւոյն գնայր պճնեալ և պաճուճեալ՝ որ մեծ ուրախութիւն եղեւ ի մէջ պալատականաց և ի մէջ կեանտէրի, թէ՛ վասն առաջին ելից թագաւորին և թէ վասն այնու հանդիսութեամբ ելանելոյ Թովմաճանին ի պատիւ թագուհւոյն և թագաւորին։

Եւ այն վերոգրեալ վեց գրագիրքն ի մէջ երից ամսոց ուսան բախամով առնել զհաշիւն, և այնուհետեւ բարձաւ բակլայի հաշիւն ի պալատէ թագաւորին. և թագուհին եւս Թովմաճանին իբրեւ վարձ ուսուցանելոյ զբախամն՝ 20 վաքիէ ոսկի, որ առնէ 500 դրշ.։

Այլ արդ այժմ մի՛ կարծեսցէ ոք թէ գանձն այս հապէշ թագաւորի իցէ մեծ ինչ՝ որպէս ի մերս է գանձք թագաւորութեան անհամար ակնեղինաց և ոսկեղինաց և արծաթեղինաց. և որքան կարելի է համառօտիւ պատմեցից։